ԱՎԴ4/0001/01/24

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13 փետրվարի 2024 թվական ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը,

նախագահությամբ՝ Հ.ԱՍԱՏՐՅԱՆԻ
մասնակցությամբ դատավորներ՝ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆԻ
Դ.ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ
Ա.ՊՈՂՈՍՅԱՆԻ

ուսումնասիրելով թիվ ԱՎԴ4/0001/01/24 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2024 թվականի փետրվարի 5-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2024 թվականի հունվարի 4-ին Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանում ստացվել է Հերմինե Հարությունի Թովմասյանի վերաբերյալ երեք դրվագ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով, տասնչորս դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 1-ին մասով, տասնհինգ դրվագ՝

255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով թիվ 28114422 (ԱՎԴ4/0001/01/24) քրեական վարույթը:

Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հունվարի 8-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ4/0001/01/24 քրեական վարույթն ստանձնելու և 2024 թվականի հունվարի 17-ին նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հունվարի 17-ին որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին:

3. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի փետրվարի 5-ին որոշում է կայացրել թիվ ԱՎԴ4/0001/01/24 քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2024 թվականի փետրվարի 8-ին:

<u>Ընդդատության վերաբերյալ հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի հունվարի 8-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Նախնական դատալսումների ընթացքում մեղադրյալ Հերմինե Թովմասյանը հայտնեց, որ համաձայն է, որպեսզի քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխվի և գործն ըստ ընդդատության ուղարկվի Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ հաշվի առնելով, որ վարույթի մասնավոր մասնակիցներից՝ տուժողների մեծամասնությունը բնակվում է Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի դատական տարածքում:*

(…)

Ուսումնասիրելով քրեական գործի նյութերը և լսելով դատական վարույթի մասնակիցների դիրքորոշումները՝ դատարանը եկավ այն եզրահանգման, որ

քրեական գործի տարածքային ընդդատությունը պետք է փոխվի և գործն ըստ ընդդատության ուղարկվի Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ հետևյալ պատճառաբանությամբ.

(…)

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Հերմինե Թովմասյանը համաձայնվել է, որպեսզի քրեական գործի տարածքային ընդդատությունը փոխվի և գործն ըստ ընդդատության ուղարկվի Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան և հաշվի առնելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը՝ թվով 32 տուժողներից 11-ը բնակվում են Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, իսկ 7-ը Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, նշված մարզերը գտնվում են շուրջ 60 կիլոմետր հեռավորության վրա, Դատարանի գնահատմամբ քրեական դատավարության արդյունավետ կազմակերպման, քրեական վարույթի արագ, լրիվ և օբյեկտիվ քննության նկատառումներից ելնելով՝ սույն քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելն անհրաժեշտություն է, հետևաբար՝ քրեական գործի տարածքային ընդդատությունը պետք է փոխվի և գործն ըստ ընդդատության ուղարկվի Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան»[1]:

6. Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2024 թվականի փետրվարի 5-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմանը, քանի որ քրեական գործի ուսումնասիրությունը վկայում է, որ գործով ճիշտ է 11 տուժողները բնակվում են Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, մինչդեռ դատավարության մյուս մասնակիցները՝ 21 տուժողները, 2 վկաները բնակվում են տարբեր մարզերում՝ Շիրակի, Վայոց ձորի, Սյունիքի, Արմավիրի մարզերում, մեղադրյալը՝ Արմավիրի մարզում, հանրային*

[1] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, թերթեր 123-125:

մեղադրողը և պաշտպանը Շիրակի մարզում: Տվյալ պարագայում Դատարանի համար անհասկանալի է, թե ինչ հանգամանքների հիման վրա է Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը հանգել այն եզրակացության, որ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը պետք է փոխել և այն ուղարկել Լոռու մարզի ատյանի ընդհանուր իրավասության դատարան, երբ ուղղակի հաշվարկի արդյունքում անգամ չի ստացվում, որ վարույթի մասնավոր մասնակիցների մեծամասնությունը բնակվում է Լոռու մարզի ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Այնուամենայնիվ, Դատարանը գտնում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարանը, եթե անգամ հաշվարկի արդյունքում գտել է, որ տուժողների մեծամասնությունը (մի քանի հոգու տարբերությամբ) բնակվում է Լոռու մարզի ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, ապա ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասը կիրառել է չափազանց ձևականացված, որպիսի մոտեցումը չի բխում արդարադատության շահից: (…)»[2]:

<u>Վճռաբեկ դատարանի քրեական պալատի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

Նախնառաջ հարկ է նշել, որ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը որոշում է կայացրել թիվ ԱՎԴ4/0001/01/24 քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահին ուղարկելու մասին: Մինչդեռ, սույն որոշման կայացման օրվա դրությամբ ուժի մեջ է մտել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 2024 թվականի հունվարի 16-ի թիվ ՀՕ-32-Ն ՀՀ օրենքը՝ համաձայն որի՝ վարույթի տարածքային ընդդատության հարցը վերջնականապես լուծում է Վճռաբեկ դատարանի քրեական պալատը, ուստի ընդդատության մասին հարցը ենթակա է լուծման Վճռաբեկ դատարանի քրեական պալատի կողմից:

[2] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 10, թերթեր 11-31:

7. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավոր է արդյո՞ք Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԱՎԴ4/0001/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին որոշումը:

8. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

9. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

9.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[3]:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[4]:

---

[3] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

10. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ «*(…) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (…), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (…)*

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[5]:

11. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Այդ չափանիշների հիմքում ընկած են ոչ թե իրավակիրառների սուբյեկտիվ հայեցողությունը, այլ քրեական վարույթի օրենքով սահմանված օբյեկտիվ հատկանիշները, որոնց առկայությունն էլ թույլ է տալիս

[5] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

արձանագրել տվյալ դատարանի՝ այդպիսին հանդես գալու իրավունքն այդ վարույթով: Միաժամանակ, ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտներից, որոնք կարող են առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

12. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «*Տարածքային ընդդատությունը բոլոր մեղադրյալների համաձայնությամբ կարող է փոխվել, եթե վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է առաջին ատյանի մեկ այլ դատարանի դատական տարածքում: Ընդդատությունը փոխելու որոշումն ընդունում է մեղադրանքը քննող դատարանը*»:

Նույն օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«(…) 4. Վարույթն ըստ տարածքային ընդդատության ստացած առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություններ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարանի քրեական պալատ ուղարկելու մասին, եթե համաձայն չէ վարույթի տարածքային ընդդատությանը:*

(…)

7. Սույն հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում վերջնականապես լուծում է վարույթի տարածքային ընդդատության հարցը: (…)»:

12.1. Անհրաժեշտ է ընդգծել, որ ընդդատությունը փոխելու վերոնշյալ հայեցողական լիազորությունը կարող է գործադրվել բացառիկ դեպքերում, երբ բավարար փաստական տվյալների վկայակոչմամբ համոզիչ կերպով կհիմնավորվի

ընդդատությունը փոխելու օրենսդրի կողմից առաջադրվող պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության շահի տեսանկյունից: Հետևաբար, նշված նորմը մեկնաբանելիս չպետք է դրսևորվի չափազանց ձևական մոտեցում, այն չպետք է ենթարկվի լայն մեկնաբանության:

13. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- մեղադրյալ Հ.Թովմասյանը նախնական դատալսումների ժամանակ իր համաձայնությունն է հայտնել, որպեսզի քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխվի և վարույթը փոխանցվի Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան[6]:

- Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը, փաստելով, որ վարույթի մասնավոր մասնակիցների՝ տուժողների մեծամասնությունը բնակվում է Լոռու մարզի առաջին ատյանի դատարանի դատական տարածքում, որոշում է կայացրել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և վարույթը Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին այն հիմնավորմամբ, որ թվով երեսուներկու տուժողներից տասնմեկը բնակվում են Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, իսկ յոթը՝ Շիրակի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Միաժամանակ նշվել է, որ քրեական դատավարության արդյունավետ կազմակերպման, քրեական վարույթի արագ, լրիվ և օբյեկտիվ քննության նկատառումներից ելնելով՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելն անհրաժեշտություն է[7]:

- Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանն իր անհամաձայնությունն է հայտնել քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու վերաբերյալ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի որոշմանը՝ փաստելով, որ թեև տուժողներից տասնմեկը բնակվում են Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում, այնուամենայնիվ

---

[6] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 9, դատական նիստի արձանագրություն, թերթ 95:
[7] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:

դատավարության մյուս մասնակիցները բնակվում են տարբեր մարզերի դատական տարածքներում, հետևաբար՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված՝ վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է[8]:

14. Սույն վարույթի փաստական հանգամանքները գնահատելով վերոշարադրյալ իրավադրույթների և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելիս և վարույթը Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան փոխանցելիս չի պահպանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները: Մասնավորապես, սույն քրեական վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ մեղադրյալ Հ.Թովմասյանի բնակության վայրն է Արմավիրի մարզը, պաշտպան Վ.Մարգարյանի գործունեության վայրն է՝ Վայոց ձորի մարզը[9], երեսուներկու տուժողներից յոթի բնակության վայրն է՝ Շիրակի մարզը, յոթի բնակության վայրն է՝ Վայոց ձորի մարզը, երեքի բնակության վայրն է՝ Սյունիքի մարզը, տասնմեկի բնակության վայրն է՝ Լոռու մարզը, չորսի բնակության վայրն է՝ Արմավիրի մարզը, վկա Սարգիս Գաբրիելյանի բնակության վայրն է՝ Արմավիրի մարզը, իսկ վկա Ռոման Հովհաննիսյանի բնակության վայրն է՝ Սյունիքի մարզը[10]: Այսինքը, վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների (ընդհանուր թվով 36 անձ) միայն տասնմեկն են բնակվում Լոռու մարզում: Հետևաբար, չի հաստատվում, որ սույն վարույթի մասնավոր մասնակիցների և վկաների մեծամասնությունը բնակվում է Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանի քրեական պալատը փաստում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 261-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված՝ քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենսդրական հիմքը բացակայում է:

---

[8] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:
[9] Տե՛ս www.advocates.am ՀՀ փաստաբանների պալատի պաշտոնական կայքը:
[10] Տե՛ս վարույթի նյութեր, հատոր 8, թերթ 330-333:

Անդրադառնալով Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն դատողությանը, որ սույն վարույթի տարածքային ընդդատությունը փոխելը բխում է նաև արդարադատության արդյունավետության շահից, հարկ է արձանագրել, որ նշվածը քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու ինքնավար հիմք չէ և կարող է հաշվի առնվել, եթե պահպանված են քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու օրենքով ամրագրված նախապայմանները: Բացի այդ, վերոգրյալ տվյալների պայմաններում չի հիմնավորվում տարածքային ընդդատությունը փոխելու անհրաժեշտությունը՝ արդարադատության արդյունավետության շահի տեսանկյունից:

17. Ամփոփելով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատն արձանագրում է, որ Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից թիվ ԱՎԴ4/0001/01/24 քրեական վարույթի տարածքային ընդդատությունը փոխելու և քրեական վարույթը Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ուղարկելու մասին որոշումը հիմնավոր չէ:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 7-րդ մասով՝ Վճռաբեկ դատարանի քրեական պալատը

Ո Ր Ո Շ Ե Ց

Թիվ ԱՎԴ4/0001/01/24 քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկել Արարատի և Վայոց ձորի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան:

Նախագահող՝ _____ Հ.ԱՍԱՏՐՅԱՆ

Դատավորներ՝ _____ Ս.ԱՎԵՏԻՍՅԱՆ

_____ Լ.ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

_____ Դ.ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆ

_____ Ա.ՊՈՂՈՍՅԱՆ